

# VIOLATION OF HUMAN RIGHTS IN ARMENIA

*Posted on December 9, 2010 by Keghart*



Category: [Opinions](#)



Journalist Nikol Pashinyan, the editor-in chief of *Haykakan Zhamanak* ("Armenian Time") daily in Armenia has been subjected to "reprehensible acts...aimed at silencing ... and punishing him for his political views". A group of concerned Armenians in the Diaspora and their non-Armenian friends call upon the authorities to "put an end to the unlawful acts against him and ensure his security." Please click on [Free Journalist Nikol Pashinyan](#) to view the text in its entirety.



Journalist Nikol Pashinyan, the editor-in chief of *Haykakan Zhamanak* ("Armenian Time") daily in Armenia has been subjected to "reprehensible acts...aimed at silencing ... and punishing him for his political views". A group of concerned Armenians in the Diaspora and their non-Armenian friends call upon the authorities to "put an end to the unlawful acts against him and ensure his security." Please click on [Free Journalist Nikol Pashinyan](#) to view the text in its entirety.



### [Armenian Scholars, Artists Urge Journalist Nikol Pashinyan's Release](#)

*By Anush Martirosian, 1 December 2010*

*Dozens of pro-establishment scholars, writers and other intellectuals have expressed concern over the alleged mistreatment of opposition leader and newspaper editor Nikol Pashinian in prison and called for his immediate release.*

*Their unexpected appeals came as Pashinian was transferred to another Armenian jail on Wednesday amid opposition fears that the authorities will restrict his daily communication with the outside world.*

*In a joint statement, 34 members of Armenia's National Academy Science said "it is unbefitting for Armenia to keep a journalist in jail and thus violate international norms and conventions." They said the authorities will defuse "the internal political crisis" dating back to the February 2008 presidential election and improve Armenia's international reputation if they free the outspoken editor of the opposition daily "Haykakan Zhamanak."*

*A similar statement was issued on Tuesday by the pro-government chairmen of three Armenian organizations uniting writers, actors and architects. They likewise described as "unbefitting" Pashinian's continued imprisonment on charges stemming from the March 2008 post-election unrest in Yerevan.*

*Pashinian was one of the most influential speakers at massive anti-government rallies*

*organized by former President Levon Ter-Petrosian before and after the disputed presidential ballot. He was sentenced earlier this year to seven years in prison for organizing vicious clashes between security forces and opposition protesters, which left ten people dead.*

*Pashinian will have to serve only half of the controversial sentence because of a general amnesty declared by the authorities last year. Both he and Ter-Petrosian's Armenian National Congress (HAK) consider the case politically motivated.*

*Pashinian was transferred from the Kosh prison near Yerevan to another penitentiary institution located outside the northwestern Armenian town of Artik. The prison chief, Vartan Sargsian, told RFE/RL's Armenian service that the oppositionist will be kept there in a "stricter regime."*

*An Armenian Justice Ministry department managing the national prisons attributed the relocation on Wednesday to Pashinian's "numerous violations" of the prison regime and his "behavior causing conflicts with other inmates." In a written statement, department spokesman Arsen Babayan said their relations deteriorated because of "a number of slanders."*

*Pashinian was placed in solitary confinement at Kosh last month after claiming to have been assaulted by unknown men. The prison administration and the Justice Ministry denied the claims and said he himself wanted to change his prison cell for security reasons. Pashinian insisted, however, that he never made such a request.*

*His wife Anna Hakobian, who currently manages "Haykakan Zhamanak," suggested that the authorities are keen to stop the oppositionist writing hard-hitting articles for the paper on a regular basis. In a Tuesday statement condemning the transfer, the HAK similarly claimed that the authorities want to "complicate his journalistic activity."*

*December 2, 2010*

*Dear Friends,*

*Some of you have already endorsed the petition that was sent a few days ago. Thank you for your trust. Many e-mails have been received asking the background of the issue at hand. This e-mail hopefully will address that query.*

*For 70 years Armenia was part of the USSR. Following the implosion of the Soviet Union and Armenia's independence in 1991, Armenia--like other former Soviet republics--faced enormous difficulties in transforming into a democratic country. Violations of freedom of speech and other human rights abuses became endemic. Except for the first parliamentary and presidential elections in the early '90s subsequent elections have been tainted in varying degrees. A number of civilians were killed in the last presidential election in 2008.*

*Nikol Pashinyan, editor-in-chief of the popular Haykakan Jamanak ("Armenian Times") daily, was critical of the government. His criticism of the establishment made him the target of assassination in 2004. He was imprisoned in 2009. During his incarceration he was subjected to torture and to threats to his life.*

*In an unprecedented move, the intellectual elite of Armenia--academics, scientists, writers, artists, journalists--including those sympathetic to the authorities, have demanded the release of Pashinyan and for guarantees to his security. A group of Canadian-Armenians and their non-Armenian friends in Canada have joined the call to uphold the principles of freedom of speech and human rights in Armenia. We regard Pashinyan's imprisonment an abuse of the right to free speech--irrespective of Pashinyan's political views. Please read the statement at Free Journalist Nikol Pashinyan.*

*Keghart.com and its friends request your kind endorsement, hoping that our collective protest could lead to Pashinyan's release. Furthermore, it may send a strong message to autocrats everywhere that journalists and intellectuals are not alone, and should be treated with dignity.*

*Thank you for your attention to this important human rights issue.*

*Respectfully,*

*Dikran J. Abrahamian BA, MD*

*Penetanguishene, Ontario*

*[www.keghart.com](http://www.keghart.com)*

**Երեւան 25 Նոյեմբեր 2010.** Կոնստրվատորիայի դիմացի այգում, Կոմիտասի արձանի մոտ էին հավաքվել Հայաստանի մշակույթի եւ արվեստի գործիչները՝ ի պաշտպանություն «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր, քաղբանտարկյալ Նիկոլ Փաշինյանի: Ակցիայի ընթացքում ընդունվեց նաեւ հայտարարություն: Ստորեւ ներկայացնում ենք հայտարարությունն ու մշակույթի եւ արվեստի այն գործիչների ցանկը, ովքեր ստորագրել են այն:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի շուրջ վերջին շրջանում ծավալվող իրադարձությունները, մասնավորապես լրագրողի նկատմամբ հարձակումների պարբերականությունը մտահոգություն են հարուցում: Սա վկայում է այն մասին, որ պատկան մարմիններն անկարող են ապահովել դատապարտված լրագրողի անվտանգությունը: Ավելին, հասարակական որոշ շերտեր կասկած են հայտնում այդ հարձակումների ուղղորդված լինելու եւ լրագրողի կյանքին անմիջական վտանգ սպառնալու մասին: Մենք վստահ ենք, որ Հայաստանի Հանրապետությանը՝

որպես եվրոպական արժեքների դավանող, ժողովրդավարությունը որպես այլընտրանք չունեցող զարգացման ուղի ընտրած պետության, հարիր չէ ազատագրկման մեջ պահել լրագրողի՝ հակառակ միջազգային հանրության եւ միջազգային նորմերի եւ կոնվենցիաների պահանջների: Մենք, հանուն Հայաստանի Հանրապետության պատվի եւ արժանապատվության, հաշվի առնելով լրագրողի կյանքին վտանգ սպառնալու հանգամանքը, անկախ նրանից՝ կիսում ենք նրա քաղաքական հայացքները, թե ոչ, պահանջում ենք անհապաղ քննարկել եւ լուծել Նիկոլ Փաշինյանի ազատ արձակման հարցը՝ ի կատարումն Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի պահանջների:

1. Օհան Դուրյան, դիրիժոր
2. Հակոբ Հակոբյան, նկարիչ
3. Վարդուհի Վարդերեսյան, դերասանուհի
4. Վահե Շահվերդյան, ռեժիսոր
5. Երվանդ Մանարյան, դերասան
6. Վահան Արծրունի, երաժիշտ
7. Սամվել Սեւադա, նկարիչ
8. Ռուբեն Հախվերդյան, երգահան
8. Ռուբեն Բաբայան, ռեժիսոր
9. Վահագն Պապայան, երաժիշտ
10. Ալիս Շամիրյան-Դուրյան, երգչուհի
11. Նարեկ Բարսեղյան («Բամբինո»)
12. Արիկ Գրիգորյան («Բամբինո»)
13. Սարգիս Մանուկյան («Էմփիռեյ»)
14. Աշոտ Ադամյան, դերասան
15. Կարինե Խողիկյան, դրամատուրգ
16. Լենոն Խեչոյան, գրող
17. Չարուհի Մուրադյան, նկարչուհի
18. Տիգրան Բաղդասարյան, նկարիչ
19. Նելլի Շահնազարյան, դրամատուրգ
20. Լենոն Ջավախյան, գրող
21. Արմեն Շեկոյան, գրող
22. Գայանե Գրիգորյան, երգչուհի
23. Անահիտ Չարդարյան, նկարչուհի
24. Անուշ Զուբարյան, նկարչուհի
25. Արտեմ Ղազարյան, կոմպոզիտոր
26. Տիգրան Խզմայան, ռեժիսոր
27. Գագիկ Զարչյան, նկարիչ

28. Վան Արյան, գրող, հրապարակիչ
29. Գուրգեն Խանջյան, գրող
30. Ռոբերտ Կարայան, գրող, հրապարակախոս
31. Արփի Ոսկանյան, գրող
32. Համբարձում Համբարձումյան, գրող
33. Մանիկ Գրիգորյան, երգչուհի
34. Դավիթ Մաթեոսայան, բեմադրիչ
35. Տիգրան Պասկեւիչյան, գրող, հրապարակախոս
36. Հովհաննես Մարգարյան, նկարիչ
37. Գրիգոր Խաչատրյան, նկարիչ
38. Կարինե Աշուղյան, բանաստեղծ
39. Մեսրոպ Հարությունյան, գրող
40. Արա Նեղոյան, թատերագետ
41. Ջեմմա Կարապետյան, դերասանուհի
42. Արման Գրիգորյան, նկարիչ
43. Սամվել Փարթամյան, նկարիչ
44. Ավետիք Ալավերդյան, նկարիչ
45. Խաչիկ Մանուկյան, բանաստեղծ
46. Ալիս Հովհաննիսյան, արձակագիր
47. Գագիկ Դավթյան, գրող
48. Տիգրան Խաչատրյան, նկարիչ
49. Կարեն Օհանյան, նկարիչ
50. Գոռ Մկրտչյան, նկարիչ
51. Սարգիս Գրիգորյան, դերասան
52. Գագիկ Կիլիկյան, բանաստեղծ
53. Մարինե Պետրոսյան, գրող, հրապարակախոս
54. Լիզա Ճաղարյան, գրող, հրապարակախոս
55. Սամվել Մկրտչյան, գրող, թարգմանիչ
56. Վարդան Ազատյան, արվեստաբան
57. Նազարեթ Կարոյան, արվեստաբան
58. Ռուբեն Արեւշատյան, արվեստաբան
60. Սերժ Գաբյան, ռեժիսոր
61. Նազենի Ղարիբյան, արվեստաբան
62. Հրաչյա Հակոբյան, դերասան
63. Նարեկ Ղափլանյան, դերասան
64. Գարսեւան Խաչատրյան, ռեժիսոր
65. Լաերտ Մովսիսիսյան, ռեժիսոր
66. Արա Պետրոսյան, նկարիչ
67. Վահագն Կարապետյան, ռեժիսոր

68. Արա Ճաղարյան, ռեժիսոր
69. Գարիկ Ենգիբարյան, նկարիչ
70. Դավիթ Քիրամիջյան, ռեժիսոր
71. Արամ Խաչատրյան, նկարիչ
72. Սեդա Գրիգորյան, ռեժիսոր
73. Գագիկ Աղասարյան, ճարտարապետ
74. Էդուարդ Մուրադյան, նկարիչ
75. Լուսին Մամյան, ճարտարապետ
76. Արմինե Կետիկյան, ռեժիսոր
77. Էդգար Ամրոյան, նկարիչ
78. Արթուր Անդրանիկյան, գրականագետ
79. Հրաչյա Բաղդասարյան, նկարիչ
80. Գեուրգ Գասպարյան, դերասան
81. Գառնիկ Հովհաննիսյան, գեղանկարիչ
82. Չարուհի Հովհաննիսյան, երաժիշտ
83. Արմեն Խոջոյան, նկարիչ
84. Սամվել Իսրայելյան, նորարար արվեստի ինժեներ
85. Միհրան Մարգարյան, նկարիչ
86. Կարին Դուլուխանյան, նկարիչ ճարտարապետ
87. Արթուր Պետրոսյան, արվեստագետ
88. Սուսաննա Խաչատրյան, երաժիշտ
89. Եվա Ադամյան, թարգմանչուհի
90. Անահիտ Մեսրոպյան, թարգմանչուհի
91. Արամ Բայանդուրյան, թարգմանիչ
92. Համայակ Վարդանյան, երաժիշտ
93. Տիգրան Սարգսյան, կինոօպերատոր, լուսանկարիչ
94. Տաթև Եսայան, գրաֆիկա
95. Վաչե Պետրոսյան, նկարիչ
96. Ծովինար Աթաբեկյան, երաժիշտ
97. Լենա Մելիքյան, արվեստագետ
98. Էդուարդ Մուրադյան, նկարիչ
99. Կարո Յայլայան, երաժիշտ
100. Ռաֆիկ Մանուկյան, երաժիշտ
101. Նվարդ Տիրացյան, արվեստաբան
102. Արմեն Ավագյան, բանաստեղծ
103. Կարեն Խաչատրյան, դերասան
104. Արամայիս Ասլանյան, ճարտարագետ
105. Եղիսաբեթ Հովհաննիսյան, ճարտարապետ
106. Գագիկ Ղազարե, ռեժիսոր

107. Ավարդ Սեմիրջյան, գրականագետ

108. Արա Շիրինյան, ռեժիսոր

**Լրատվամիջոցների հայտարարությունը Նիկոլ Փաշինյանի դեմ հարձակման  
կապակցությամբ**

4 Նոյեմբեր 2010

✘ Երեկ մենք տեղեկացանք, որ Հայկական ժամանակ օրաթերթի խմբագիր Նիկոլ Փաշինյանի նկատմամբ Կոչ քրեակատարողական հիմնարկում հարձակում է տեղի ունեցել: Ընդ որում, սա առաջին դեպքը չէ, մամուլը պարբերաբար գրում է Փաշինյանի նկատմամբ կալանավայրում ձեռնարկված ճնշումների մասին: Սա առաջին հերթին վկայում է, որ իշխանություններն անկարող են ապահովել մեր գործընկերոջ անվտանգությունը, ինչպես նաեւ հիմնավոր կասկածներ է հարուցում, որ այս հարձակումներն ուղղորդված են:

Մենք վրդովված ենք կատարված փաստի առիթով եւ լրագրողի, խմբագրի նկատմամբ կիրառվող ոտնձգությունները դիտում ենք որպես մարդկային, բարոյական, իրավական բոլոր նորմերի եւ կոնվենցիաների խախտում: Պահանջում ենք իշխանություններից անհապաղ ձեռնարկել մեր գործընկերոջ անվտանգությունն ապահովելուն ուղղված գործուն միջոցներ, իսկ այնուհետեւ ի կատարումն Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի պահանջների, քննարկել եւ լուծել Նիկոլ Փաշինյանի ազատ արձակման հարցը:

Մեսրոպ Մովսեսյան – «Ա1+» հեռուստաընկերության տնօրեն

Արմենիկա Կիվիրյան – «News.am» կայքի խմբագիր

Հայկազն Ղահրիյան – «Լրագիր» կայքի խմբագիր

Նարինե Մկրտչյան – Մամուլի ազգային ակումբի նախագահ

Վահան Խաչատրյան – ԳԱԼԱ հեռուստաընկերության տնօրեն

Արգիշտի Կիվիրյան – «Armenia Today» գործակալության համակարգող

Շողեր Մաթեոսյան – «Զորորդ ինքնիշխանություն» թերթի խմբագիր

Մանուկ Սուքիասյան – «Regnews.com» կայքի խմբագիր

Փիրուզա Մելիքսեթյան – «Իրատես դե ֆակտո» թերթի խմբագիր

Սաթիկ Սեյրանյան – «168 ժամ» թերթի խմբագիր

Արմինե Օհանյան – «Հրապարակ» թերթի խմբագիր

Ժաննա Ալեքսանյան – «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ նախագահ

Արման Բաբաջանյան – «Ժամանակ» թերթի խմբագիր

Էդիկ Բաղդասարյան- «Հետք» կայքի խմբագիր

Աշոտ Աղաբաբյան- «Հայացք» թերթի խմբագիր

**Փաշինյանին կտրել են արտաքին աշխարհից**



Submitted by Aram Basmajian on Fri, 2010-12-10 08:08.

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանից «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը ապօրինաբար հրաժարվում է նամակներ, դիմումներ ընդունել: Այս մասին հայտնեց Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը դեկտեմբերի 9-ին Փաշինյանի հետ տեսակցություն ունենալուց հետո: Ըստ Աննա Հակոբյանի, Նիկոլ Փաշինյանը իրեն հայտնել է, որ «Արթիկ» ԶԿՀ ղեկավարությունը ոչ միայն իր դեռեւս նախորդ շաբաթ հանձնած ծրարները չի փոխանցում «Հայփոստ»-ի Արթիկի բաժանմունքին, այլև սկսել է ընդհանրապես հրաժարվել որեւէ ծրար նրանից ընդունել:

Այսպիսով, քաղբանտարկյալ Նիկոլ Փաշինյանը ապօրինաբար գրկված է ընտանիքի անդամների հետ նամակագրական կապից, ինչպես նաեւ գրկված է որպես «ՀԺ»-ի գլխավոր խմբագիր իր աշխատանքը կատարելու հնարավորությունից: Ակնհայտ է, որ նման աղաղակող ապօրինության մարչակազմը միայն մեկ հարց է լուծում՝ Նիկոլ Փաշինյանի հողվածների տպագրությունը խոչընդոտելը: Ինչպես Փաշինյանը տեղեկացրել է կնոջը, ինքը այս ընթացքում ամեն օր հողվածներ է գրել, մինչդեռ «ՀԺ» խմբագրությունը ոչինչ չի ստացել:

Աննա Հակոբյանը հայտնեց նաեւ, որ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ նման ապօրինությունները անհանգստություն են առաջացնում նրա կյանքի եւ անվտանգության խնդրի շուրջ, մասնավորապես կապի բացակայության պայմաններում հնարավոր չէ տեղեկություն ստանալ Փաշինյանի որպիսության մասին, ինչը հաշվի առնելով Նիկոլ Փաշինյանի նկատմամբ տեղի ունեցած նախորդ հարձակումների շարքը, լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

<http://www.hraparak.am/2010/12/10/nikol-pashinyanin-ktrelen-artaqin-ashxarhi-het-shpman-hnar-avorutyunic/>

### **Ռ. Քոչարյանի ընտանիքը դատի է տվել «Ժամանակ» օրաթերթին**

Submitted by Aram Basmajian (92.62.160.4)

Date: Thu, 2010-12-09 09:45

Նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի ընտանիքը դատական հայց է ներկայացրել «Ժամանակ» օրաթերթի դեմ՝ այն հիմնավորելով նրանով, թե թերթի մի քանի հրապարակումներ արատավորել են Քոչարյանների բարի համբավը: Քոչարյանների ընտանիքի այս նախաձեռնության իրավական կողմին այս պահին չենք ցանկանում անդրադառնալ, եթե իհարկե, իրավական կողմ այստեղ ընդհանրապես կա:

Այստեղ հատկապես շատ էական է հարցի բարոյա-քաղաքական և քաղաքացի-հոգեբանական կողմը: Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը զբաղեցրած մարդու ընտանիքն այդ պաշտոնից հեռանալուց ընդամենը երկու տարի

անց հայտնվել է թերթերից ֆինանսական փոխհատուցումներ պահանջողի դերում:

Հիշեցնենք, որ ամիսներ առաջ էլ Քոչարյանը նույն նախաձեռնությամբ հանդես էր եկել «Հայկական ժամանակ» օրաթերթի դեմ: Այստեղ երևի թե կա երկու խնդիր:

Ըստ երևույթին, սոցիալական ավելի ու ավելի ծանրացող պայմաններում Քոչարյանների ընտանիքն ի դեմս ազատ մամուլի փորձում է տեսնել իր ընտանեկան բյուջեի համալրման միջոց: Դե գները երկրում օրեցօր թանկանում են, դիմացը Նոր տարի է, Լուծկովից հետո էլ երևի թե խնդիրներ կան` բիզնես գործերի հետ կապված, և այն 4 միլիարդը, որի մասին` որպես նրա ունեցվածքի գրել էին ռուսական որոշ լրատվամիջոցներ, ըստ երևույթին, չի բավականացնում միաժամանակ ապրելուն և առյուծ սպանելուն: Մյուս խնդիրը երևի թե այն է, որ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, զրկվելով իշխանական համակարգում իր քաղաքական ֆունկցիաներից, այժմ իրականացնում է շատ ավելի մանր առաջադրանքներ և ծառայում է որպես ֆինանսական մահակ ազատ լրատվամիջոցների գլխին: Այսինքն` նա փորձում է դատական հայցեր նախաձեռնել իշխանության ենթակայության տակ չգտնվող լրատվամիջոցների դեմ և այդպիսով ստեղծել նախադեպեր, որոնց նպատակը ազատ մամուլը, ազատ խոսքը Հայաստանում զսպելն է:

Իսկ որ Քոչարյանը «գենետիկ» անհամատեղելիություն ունի ազատ մամուլի, ազատ խոսքի հանդեպ, երևի թե կասկած չկա. Ա1+-ի օրինակը վկա: Իսկ այդ ֆունկցիայի համար լավագույն գործիք երևի թե Ռոբերտ Քոչարյանն է ընտրվել այն պարզ պատճառով, որ այն իրականացնելու համար պետք է նաև անձնական հատկանիշներ` անձնական քինախնդրության և վրեժխնդրության զարգացած զգացում, որն էլ, ըստ ելույթան, առաջ է մղում Ռոբերտ Քոչարյանին: Սակայն երևի թե իր նախագահության, ինչպես նաև հետնախագահության ժամանակաշրջանից նա պետք է որ հասկացած լիներ, որ Հայաստանում կան մարդիկ, կան քաղաքացիներ, կան հանրային խմբեր, որոնց համար անձնականը` լինի դա քինախնդրություն, թե նյութական շահ, երկրորդ պլանում է և ստորադասվում է հասարակական, պետական շահին:

Իսկ այդ շահը պահանջում է ազատություն, պահանջում է ազատ մամուլ, ազատ խոսք: Եվ Հայաստանում ապագան ոչ թե քոչարյանական ֆունկցիաներինն է, այլ ազատությանը, ազատ խոսքինը, ազատ մամուլինն ու Ազատ Հայրենիքինը: Ի վերջո հանրային և պետական շահի հանդեպ հավատը ավելի ուժեղ է, քան ցանկացած խոչընդոտ, որ կարող են ներկայացնել անձնական կամ խմբակային շահով առաջնորդվող մարդիկ` անկախ նրանց պաշտոնից և դիրքից: Ու այդ հավատի վրա է պահվում այսօրվա Հայաստանը, որի վրա էլ խարսխվելու է Հայաստանի ապագան: [www.zhamanak.com](http://www.zhamanak.com)

**Unlawful acts against Nikol continue : Նամակ պահողները**

Submitted by Yervand Karapetyan on Thu, 2010-12-09 09:19.

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր, քաղաքականաբան Նիկոլ Փաշինյանի նամակները, որոնց մեջ նրա գրած հոդվածներն են, արդեն մեկ շաբաթ է, «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը փոստին չի հանձնել:

Նիկոլ Փաշինյանը անցած հինգշաբթի օրվանից սկսել է ծրարով իր հոդվածներն ուղարկել մեր թերթին, որոնք այդպես էլ տեղ չեն հասնում: Երեկ «Հայփոստի» մամուլի քարտուղար Գեւորգ Աբրահամյանը մեր թղթակցի հետ զրույցում ասել է, որ երեկվա դրույթամբ «Հայփոստի» Արթիկի բաժանմունք Նիկոլ Փաշինյանի անունով որեւէ ծրար չի ստացվել, եւ նամակների տեղ չհասնելու խնդիրը փոստի գործունեության հետ կապված չէ: Այսինքն, նամակները «Արթիկ» ԶԿՀ-ից դուրս չեն եկել եւ «Հայփոստին» չեն հանձնվել: Նիկոլ Փաշինյանի եւ «Արթիկ» ԶԿՀ-ում պահվող դատապարտյալների նամակները փոստին հանձնելը նշված ԶԿՀ-ի վարչակազմի պարտավորությունն է: Մեր թղթակցին ԶԿՀ-ից խնդրի առնչությամբ պաշտոնական պարզաբանում ստանալ չի հաջողվել: Երբ «Արթիկ» ԶԿՀ-ում հարցման մասին տեղեկացել են, համապատասխան պաշտոնյաների հետ կապվելը դարձել է անհնար:

ՀԺ -

### Գյաղաների երկիրը

Submitted by Aram Basmajian on Thu, 2010-12-09 09:06.

Այն, որ երկրիդ քաղաքապետը մարդ է ծեծում եւ նախագահիդ աշխատակազմի ղեկավարը ոչ թե ամեն ինչ անում է, որ քաղաքապետի գայրույթը մեղմի ու կոնֆլիկտը հարթի, այլ իր ենթակային ուղարկում է Լինչի դատաստանի, ոչ մի, անգամ գողական աշխարհի պատկերացումների մեջ չի տեղավորվում:

Սակայն այն, որ մեր երկրում սկանդալի պատճառ է դառնում ոչ թե պաշտոնյայի աշխատանքային ճախողումը, ոչ թե նրա կոռումպացվածությունը, ոչ թե նրա մասնագիտական անհամապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին, այլ «ռազբորկան», առավել մեծ խայտառակություն է: Սա նշանակում է, որ մեր երկրում առաջինից մինչեւ վերջին մարդը ապրում են «քուչի տղերքի» հոգեբանությամբ, եւ նրանց թասիբին կպչելը կարող է ներքաղաքական ճգնաժամի պատճառ դառնալ: Երբ Վերահսկիչ պալատը միլիարդավոր դոլարների յուրացումներ ու չարաշահումներ է հայտնաբերում, դա իշխանությունն ու հասարակությունը հանգիստ են տանում, իսկ այ, մի տղայական ծեծկռտուք կարող է երկիրը փոթորկել այնպես, որ միանգամից երկու բարձրաստիճան պաշտոնյա հրաժարական տան, իշխող կուսակցությունը շտապ խորհրդակցություն հրավիրի, աշխուժանան այդ ուժի եւ գործող նախագահի թշնամիները ու ձեռքերը շփելով պատրաստվեն հարմար պահին:

Մի խոսքով՝ գրեթե իշխանափոխության վտանգ առաջանա: Այս պահերին ես հասկանում, թե ինչքան փոքրիկ ու ինչ հիվանդ երկրում ենք ապրում մենք: Ինչ հեշտ է նման երկիրը կառավարելը եւ ինչ վատ է կառավարվում այն: Ինչ արատավոր

հարաբերություններ են տիրում երկրում եւ քաղաքական կոչվող ուժերն ինչքան հեռու են իրենց կոչումից: Եվ վերջում՝ չեմ կարող չափսոսալ Գագիկ Բեգլարյանի հեռանալու կապակցությամբ: Իր բոլոր թերություններով հանդերձ՝ նա ձգտում էր լավ քաղաքապետ լինել եւ արդարացել երեւանցիների հույսերը: Կլինի՞ արդյոք հաջորդն այդպիսին: [www.hraparak.am](http://www.hraparak.am)

### Political Prisoner Sarkis Hatspanian's Open Letter From Prison

Submitted by Aram Basmajian on Thu, 2010-12-09 08:44.

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՂԸ ...Ֆրանսիայի քաղաքացի եմ, սակայն 20 տարուց ավելի է՝ ապրում եմ Հայաստանում, որից մոտ 4 տարին գտնվել եմ Արցախում՝ մասնակցելով սրբազան ազատամարտին նախ իբրեւ կամավոր, ապա եւ՝ ԼՂՀ պաշտպանական բանակի սպա: Պատերազմում ազգին մատուցած ծառայություններիս համար Արցախի բանակի գլխավոր հրամանատար- պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել եմ:

2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ սատարել եմ Լեւոն Տեր-Պետրոսյանի քարոզարշավը եւ փետրվարի 20-ից մինչեւ մարտի 1-ի առավոտյան մասնակցել Ազատության հրապարակի շուրջօրյա հանրահավաքներին, որից 4 օրը հացադուլ եմ արել եւ բազմաթիվ հրապարակային ելույթներ ունեցել: Մարտի 1-ից անմիջապես հետո ՀՀ ոստիկանությունը 19 անձանց դեմ ՀՀ վարչական դատարան հայց էր ներկայացրել, որոնցից դատապարտված միակ անձն եմ: Մնացածի դեմ ներկայացված հայցերից ոստիկանությունն ինքն է հրաժարվել, իսկ իմ դեմ կայացված դատական վճիռն ուժի մեջ է թողնվել եւ առ այսօր անփոփոխ մնացել: Սա եղել է առաջին խտրական վերաբերմունքն իմ հանդեպ, որից տուժել եմ:

Read the entire article @: <http://www.aravot.am/am/articles/guidepark/86524/view>

### Ազատ արձակվեց ևս մեկ քաղբանտարկյալ. մնացին իննը

Submitted by Aram Basmajian on Thu, 2010-12-09 07:44.

Այսօր «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկից ազատ է արձակվել քաղբանտարկյալ Ֆելիքս Գևորգյանը: Նրան դիմավորել են ՀԱԿ ներկայացուցիչները, Գևորգյանի հարազատները, բարեկամներն ու ընկերները: Ինչպես Tert.am-ին տեղեկացրեց ՀԱԿ ակտիվիստ Տիգրան Առաքելյանը, «ապօրինի մեղադրանքներով ձերբակալված և դատապարտված Ֆելիքս Գևորգյանը ներքին և արտաքին ճնշումների արդյունքում ազատ է արձակվել»:

Հիշեցնենք, որ Ֆելիքս Գևորգյանը ձերբակալվել էր 2008 թվականի մարտմեկյան դեպքերից հետո և դատապարտվել էր 7 տարվա ազատազրկման՝ 235 հոդվածի 2-րդ մասով՝ (ապօրինի զենք ու զինամթերք ձեռք բերելն ու պահելը) և 238 հոդվածի հատկանիշներով (զենք զինամթերք, պայթուցիկ սարքեր հափշտակելը):

«Ֆեյիբս Գևորգյանի ազատ արձակմամբ Հայաստանում քաղբանտարկյալների թիվը հասավ 9-ի: Ես կարծում եմ, որ շատ մոտ ապագայում մնացած քաղբանտարկյալները ևս ազատ կարձակվեն», - ասաց Տիգրան Առաքելյանը:

### **Հայր պատմական հայրենիքը գերադասում է իրական հայրենիքից**

Submitted by Yervand Karapetyan on Wed, 2010-12-08 17:05.

<http://www.armtimes.com/19249>

«Հայր պատմական հայրենիքը գերադասում է իրական հայրենիքից: Գերադասում է, քանզի պատմական հայրենիքը ինձամբ չի պահանջում: Այդ հայրենիքը տուրք չի պահանջում, քրտինք չի պահանջում, պաշտպանության կարիք չունի: Եւ այդ հայրենիքի հմայքը այն է, որ այնտեղ ապրելը պարտադիր չէ: Եւ հարյուրամյակներ շարունակ մենք մեր հայրենիքը մաս-մաս դարձնում ենք պատմական հայրենիք ու կապվում հավաքական, չպարտավորեցնող, սրտագին սիրով: Հայր հավաքական գոյությունից վեր է դասում հավաքական սերը առ ոչինչ: Հարյուրամյակներ շարունակ մաս-մաս մեր հայրենիքը դարձնելով պատմական, մաս-մաս ուժեղացնում ենք մեր հարեւաններին, ուժեղացնելով՝ հռչակում թշնամի, նեղվում ենք թշնամու հարեւանությունից, անիծում ենք մեր իրական հայրենիքի փոքրությունը եւ երագում մի հզոր, մի խաչակրաց բանակ, որ դարձյալ կգա ու կանցնի մեր հայրենիքի, մեր պատմական հայրենիքի, մեր հարեւանների վրայով ու այս անգամ, գուցե, հավերժորեն մնա»:

Այս տողերի հեղինակը բացառիկ դիտողականությամբ օժտված արձակագիր, պետական ականավոր գործիչ Վանո Սիրադեղյանն է: Գրել է ավելի քան տասը տարի առաջ, դառն անկեղծությամբ, աներեւակայելի ինձամքով ու սիրով, հայրենիքի ճակատագրի հանդեպ անհուն տագնապով:

